ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2019-3-1-Ա

ք. Երևան 13.06.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հունիսի 13-ի նիստում քննարկեց 2019 թվականի մայիսի 24-ին «Ուոթերլոկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված դիմումը «Aparan» ապրանքային նշանը 01.01.2015թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ՝ դաս 32. աղբյուրի ջուր ապրանքի համար:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում կան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «Aparan» ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.01.2015 թվականի դրությամբ լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքի նկատմամբ, որի համար օգտագործվել է ապրանքային նշանը: Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ «Ուոթերլոկ» ՍՊԸ-ն հանդիսանում է տվյալ ոլորտում հայտնի արտադրող, հաստատել է իր տեղը հայկական շուկայում: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն ներկայացված ապրանքային նշանը կարող է ճանաչվել հանրահայտ ՀՀ-ում «աղբյուրի ջուր» ապրանքի համար:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

# Ո Ր Ո Շ Ե Ց

«Ուոթերլոկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը «Aparan» ապրանքային նշանը 01.01.2015թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 32-րդ դասի «աղբյուրի ջուր» ապրանքի համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ամբողջովին բավարարել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ